

Գնամ, տեսնես իմ նանը ինչ բանի է,
 Անջըք բարակ, անունը՝ Նապանի է,
 Բալքի միտքը ընկնեմ, գաղտու գալու ա,
 Ման գյամ, ման գյամ Սև սանափյուր վարումը,
 Մեկ էլ ման գյամ Բոշաքարի սարումը:

ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

334. Բույրիկ ջան, քույրիկ, էդ ո՞ւր ես գնում,
 Աման, աման, եղբայր ջան, Սև ծովն եմ գնում,
 Բույրիկ ջան, քույրիկ, Սև ծովում ի՞նչ կա,
 Աման, քեզ պատմեմ, եղբայր ջան, կարմիր վարդա կա,
 Բույրիկ ջան, քույրիկ, վարդո՞ղ կկորչի,
 Աման, աման, եղբայր ջան, լեզուդ պսպանցվի:

335. Կերչ քաղաքի գլխի լալեն,
 Թաղեմ շուն Հիսուքի բալեն,
 Մորս ու քրոջս թողեց լալեն,
 Խաբեք մորս, վիրավոր եմ:

Հենց որ մտա Կերչի հողը,
 Ջանըս ընկավ մահվան դողը,
 Ծեկ քյանքուս դրին հողը,
 Խաբեք մորս, վիրավոր եմ:

Մայրս, քույրս չեղքը ծոցին,
 Փոքր բալես օրորոցին,
 Միրած յարս կրակ բոցին,
 Խաբեք մորս, վիրավոր եմ:

Մեծ եղբայր ջան, մեռնում եմ ես,
 Ընտանիքս հանչնում եմ քեզ,
 Ընաանիքիս լավ կպահես,
 Ուղածները չխնայես:

336. Հոքոսառսին քոմին պապաս,
 Տարան լյրին Գյումրին ու Ղարս,
 Տներ թողին, աղջիկ ու հարս,
 Վերան դառնաս, Մամա խաթուն,
 Յարալու եմ, տարան Բաթում:

Հասան Ղալեն քար ու քոա,
 Գյուլեն մեջը կռֆոֆոա,
 Ձեռքիս յարեն կըմմոա,
 Վերան դառնաս, Հասան Ղալա,
 Ծառին թողիր, եթիմ բալա:

Դիրքը մտա վրես բայ էր,
 Խշաիկ պարկոդս անասոված էր,
 Վերան դառնաս, Մամա խաթուն,
 Յարալու եմ, տարան Բաթում:

ՈՐԲԻ ԵՐԳ

337. Ամերիկու ճամբեն երկար ու դուպ է,
 Ամերիկացին կայնած, մամա, որքերը կուպե,
 Տեղս քաղաք է, ծովի արանք է,
 Երթալ ու գալը, մամա ջան, կրակ է:

Մտա թունելը, չոքերս դողաց,
 Դուս գալու ժամանակ, մամա, աչքերս շողաց,
 Տեղս քաղաք է, ծովը արանք է,
 Երթալ ու գալը, մամա ջան, գուլում կրակ է:

ՀԱՅՐԵՆԱՄԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

338. Երբ որ կործանվեց
 Հայոց մեծն Անին,
 Հայերը մնացին
 Օտարի չեղքին:

Արմենյան հող է,
 Երկիրը ծով է,
 Մասունը, Մուշ, Վան,
 Հայկական հող է:

Կորել է հովիվը,
 Փովել է հողը,
 Թուրքիային է մնացել
 Հայոց մեր արոտը:

Արմենյան հող է,
 Երկիրը ծով է,
 Մասունը, Մուշ ու Վան
 Հայկական հող է:

Եղիր դու այնտեղ,
 Որտեղ մի հայ կա,
 Գուրգուրիր նրան,
 Որ Հայաստան գա:

Արմենյան հող է,
Երկիրը ծով է,
Սասունը, Մուշ, Վան,
Հայկական հող է:

339. Արդահանից մինչև Թավրիս շարվել են,
Երևանում աուն են գտել հայերը:

Հայե՛ր, հայե՛ր, հայե՛ր ջան,
Ինչ կլինի, ինչ էլ աանեք Հայաստան:

Ղեռ փոքր եմ, գաղթի ճամփան չգիտեմ,
Վախենում եմ սմբակների տակ ընկնեմ:

Հայե՛ր, հայե՛ր, հայե՛ր ջան,
Ինչ կլինի, ինչ էլ աանեք Հայաստան:

Հայրս գոհվից քաջ Թաթուրի կովումը,
Մայրս գոհվեց հացի սովի տարումը:

Հայե՛ր, հայե՛ր, հայե՛ր ջան,
Ինչ կլինի, ինչ էլ տանեք Հայաստան:

340. Սասուն գավառ ժամանակին
Չի կար նման Արմենակին,
Եղավ հայոց նահատակը,
Թաղին Սասնա ժամու տակին,
Եղավ հայոց նահատակը,
Թաղին Սասնու ժամու տակին:

341. Առաքել, Մուշեղ
Լեռներեն իջան,
Լեռներեն իջան,
Ավերակ ջաղաց, հոգի ջան,
Օթևան ելավ:
Կովեցին քաջ-քաջ,
Կովեցին քաջ-քաջ,
Տիրոջ սուրբ կամքով, հոգի ջան,
Մենք կերթանք առաջ:

342. Կոտորածն անգութ, հայերը գոհվան,
Անապատ դարձավ շքեղ Ադանան,
Կրակն ու սուրը և անգութ թալան,
Ռուբենյաց տունը ախ ըրին վիրան:
Ավերակ դարձավ շքեղ Ադանան,
Կարմիր է հագել ամբողջ Կիլիկիան,

Կրակն անգամ, ոսոխը դաժան,
Հայոց արյունը կերան, կշտապան:
Ռոպե մը չանցավ հայոց խեղճերը
Ընկան սուրի տակ խուժանի ահեն,
Ժամեր ու դպրոցներ քոցի մեջ կորան,
Բյուրավոր հայեր անխնամ մեռան:
Անգամ, անօրեն թուրքը որ վատեց,
Չավակը յուր հորմեն, հարսը յուր փեսեն,
Ձնջեցին հայեր երկրիս երեսեն,
Սրյուն կհոսեր մեր հին գետերեն:

343. Ձայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն,
հայոց լեռներեն,
Թուրքը կընգնե հայոց պենքի շարժումեն,
պենքի շարժումեն,
Հայ գյուղացին տարույ ի վեր պենք, սուր
չտեսած, պենք, սուր չտեսած,
Ղաշտը թուրույ, սուր, հրապան, վա՛յ, իր
չեղքն առավ, վա՛յ, իր չեղքն առավ:
Հայ գեղջուկը ստիպում էր ամուսնուն գնար,
ամուսնուն գնար,
Պատերազմի դաշտին վրա վշտա, վշտա-
նար, վշտա, վշտանար:

*(Անդրանիկն ու Սերոբ փաշեն Սև սարից հրովարտակ
են ուղարկում Հայ գյուղերին)*

344. Ով որ քաջ է, մեզ կսպասե,
Արդեն ժամանակն է, թող գա:
Մահ, պատերազմ, օրահաս է,
Արդեն ժամանակն է, թող գա,
Երիտասարդ, նորահաս է,
Ով որ անվախ քաջ է, թող գա:

Այսքան տարի մեզ կսպանին,
Մեր կին ու աղջիկներ կտանին,
Լույս հավատից մեզ կհանին,
Նամուս ունեցողը թող գա:

Երկաթե մարդ, քարե հոգի,
Վրեժխնդիր լինի թուրքին,
Աշխուժով քարի տակ չոքի,
Անսխալ խփողը թող գա:

Կամ կովինք պարպինք, վերջանանք,
Կամ ապտտություն ըստանանք,
Բավական է գերի մնանք,
Ազնիվ մտածողը թող գա:
Բավական է գերի մնանք,
Նամուս ունեցողը թող գա:

345. ԵՍ ՄԵՆԱԿ ԶԵՄ

Սելեր եկան ճովոռայեն,
Մայրիկս եկավ գողգողայեն,
Մի լար մայրիկ, մի լար հոգիս,
Մի լար քույրիկ, ես մենակ չեմ:

Գավառա սար դարչավ Մասուն,
Պարոն կորեց յոթ հատ թոսուն,
Մի լար մայրիկ, մի լար հոգիս,
Մի լար քույրիկ, ես մենակ չեմ:

Սայրեր, քույրեր, կանչեք աստված,
Որ կատարվի մեր խնդրվածք,
Մի լար մայրիկ, մի լար հոգիս,
Մի լար քույրիկ, ես մենակ չեմ:

Մայրիկ, մ'երթա փաշի սարեն,
Կթաժանա սրաիդ յարեն,
Մի լար մայրիկ, մի լար հոգիս,
Մի լար քույրիկ, ես մենակ չեմ:

346. ԱՄՈՒԹ ԲԵՁԻ, ՀԱՄԻՂ ՍՈՒԼԹԱՆ

Սալամտթ գյուղից զինվեցան,
Ճամփա ելան, մոլորվեցան,
կրկ. Թոփեր եկավ, հա ետ դարչան,
Ամոթ քելի, Համիդ սուլթան:

Խմբապետը, Վաղարշակը,
Վահան պարվեց դրոշակը,
Վալադ Չեռոզ, Համայակը,
Ի՞նչ արեցիր, Համիդ սուլթան:

Մութ անտառից դուս եկա փուսին,
Չի բռնվում շեկ ջոուսին,
Բոլորի չեռքին էր մուսին,
Կուգան քելի, Համիդ սուլթան:

Երգեր Միմոնի անունը,
Վաղարշակի սուրբ տրյունը,
կրկ. Թախտոդ կըբըլեր գարունը
Լավ իմացիր, Համիդ սուլթան:

347. ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Կանչեցեք հայ աղերք վառ-վառ երգերով,
Ճանասարի կելներ քաջ հնգերներով,
Հալածինք թշնամին մուսին վենքերով,
Արշավենք, աղեք ջան, դեպի Հայաստան,
Արշավենք, սիրելիք, դեպի սիրուն Վան:

Դտդարանի դաշտը մեր դեմ բացվեցավ,
Միրտս արյուն ա, հեղուկ լցվեցավ,
Հնչակյանի խումբը Սարայով անցավ,
Արշավենք, աղեք ջան, դեպի Հայաստան,
Արշավենք, սիրելիք, դեպի սիրուն Վան:

Քաջ Վահրամս կանչեց վառ-վառ երգերով,
Էլի դուրս կուգանք քաջ հնգերներով,
Կփշերնք թուրքերին փայլուն վենքերով,
Արշավենք, աղեք ջան, դեպի Հայաստան,
Արշավենք, սիրելիք, դեպի սիրուն Վան:

(Սերոր փաշեն իր երկու տղաների հետ զնուժ է
Նամրութ սարը)

348. Առյուծ ելավ Սուլուխ գյուղեն,
Ինքն էր, իրա ջուխտակ աղեն,
կրկ. Լսող թուրքեր կկատաղեն,
Կեցցե Սերոբ, յուր զույգ տղեն:

Առյուծ ելավ չագեր իր խետ,
Ուղարկեցին մըջ Մուրադ գեա,
կրկ. Տերը ըլեր փաշայի հետ,
Կեցցե Սերոբ, յուր զույգ տղեն:

Նամրութ սարից եկավ դոշուն,
Սերոբ փաշեն միայն նախշուն,
կրկ. Խալիլ փաշեն դարչել էր շուն,
Կեցցե Սերոբ, յուր զույգ տղեն:

Մութ գիշերին անվախ ֆիդան
Ապատորեն ման կուգա,
Արի՛, գնանք մայր Հայաստան,
Անդրանիկը դեմ կուգա:

Հայերի մեջ վասակների
Թիվը արդեն պակասում է,
Հայ պատանին սուրը չեղքին,
Օջը մաս-մաս մորթում է:

Անուշաքույր թարմ ծաղիկներ
Հայ օրիորդը նվիրեց,
Ծուն շեխերին քարդել, փշռել
Անդրանիկը վճռեց:

350. ԶԱՐԱՅԻ ԵՐԳ. ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՎ ԳՈՐԳՈՒ ՄԻՋԵՎ

(Ֆիդայի գլխավորները Ցրոնք գյուղի ջադացն են մտնում թե չէ. Խայմախասմի զորքը եագար քանով գալի, փաթաթվում ա ջադացի չորս կուռը, մնում են շրջապատման մեջ: Տղեքը մի-մի խուրջին պատրոն ունեն: Ռուրենն ասում ա Գորգուն, թե՝ ամեն մի պատրոնով չորս թուրք պտի գնա, թե մի պատրոն ապարդյուն գնա՝ մեր ջիգյարի մեջ գնա: Ութ տղեն սկսում են կրակել: Զորս օր կրակում են, թե ինչքան են թուրքին վնաս տալի, աստված գիդի, չորս օրից եղև տղեք սովից տանջվում են: Տղեքի մեծը՝ Առյուծ Ավագն էր, Ավագն ասում ա. «Տղե՛ք, որդի սիրտ կանեք գիշերով դուս գաք, պատոնք թուրքի օղակը, իսարարը տանք Սև սար՝ Անդրանիկին»:

Գորգին, ջուխտ մաուզեր ձեռ, ջադցի դուռը կրանա, կրոռա. «Չշարժվե՛ք, թուրքեր, ով տեղից շարժվավ, շան պես կսատկացնեմ»: Էլ թուրքի պահակ կարա ձեն տա: Գորգին դուս ա գալի, ջադացի ջրի հետ ընգընում, զընում, հասնում ա Սև սար: Թռչված կանգնում ա Անդրանիկի առաջ: Անդրանիկը որ Գորգուն էտթավուր տեսնում ա, քիչ ա մնում խելքը թեցնի, ասում ա. «Տղեքն ո՞ւր են, ի՞նչ արեցիր»:

Անդրանիկ. - Եկար առաջ, կանգնեցար, Ինչու մենակ եկել ես,
Իննը գայիր, մենակ եկար,
Քաջերը կորուսել ես:

Գորգի. - Մշու լեռներ վայր իջանք,
Իջանք խաղաղ, հանգիստ աանք,
Անիրավ Աղջոն, յուր որդին
Լուր տերության տվեցին:

Անդրանիկ. - Ա՛յ տղա, ի՞նչ խոսացիր,
Չորեղ բազուկ թուլություն,
Իննը գայիր, մենակ եկար,
Քաջերը ո՞ւր կորսուցիր:

Գորգին պատասխանում ա թուրքերեն.
- Դագըման դափի թախտադան աղաջ
(Ջադայի դուռը փեռից է)
Մուշեղ սոլա դի Առաքել,
Վուրմախ տուր իլաջ:
(Մուշեղն ասում է՝ Առաքել
Չարգելն է իլաջ:)

- Դագըման դափի թախտադան աշի
(Ջադայի դուռը փեռից է)
Մուշեղ սոլա դի Առաքել,
Վուրուլ բին բաշի:
(Մուշեղն ասում է՝
Առաքել, խփե բին բաշուն:)

- Հավրուն գարդաշ լար
Ասկյար յոռու դի,
(Չարգեք հնգերենը,
Ասկյար բեպարավ)
Իգի չավուշ բիր միլիլըմ բաջա վուրուլ դի:
(Երկու չավուշ, մեկ միլիլըմ էրթիկ խփեյինք):

- Դագըման դափի թախտադան աշի,
Մուշեղ սոլա դի Առաքել վուրուն բին բաշի:
Անդրանիկն ասում է. «Ասա աենամ, վերջը
ինչ եղան տղեք»:

Գորգի. - Դագըման դափի թախտադան
աղաջ
Մուշեղ սոլա դի Առաքել
Խառըմըզ դըրաջ:

(Մուշեղն ասում է՝ Առաքել փորս է սոված:)

Անդրանիկ. - Ուրեմն աղեք սա՞ղ են:

Գորգի. - Հա:

Անդրանիկ. - Վայ քու աունը շինվի, ասա:

Անդրանիկը հասնում է Սև սար, ապատում է
տղերանց, տանում Խանասորի դաշտը:

351. ՊԱՐԶԻՐ, ԱՂՔՑՈՒՐ

(Տղեք արշավեցին Խանասորի դաշտ:

Կարկուտ է էկե Խանասորի դաշտ, բեզի տղեն մի եայ տերտերի աղջկա փախցրե, բերել ա Խանասոր: Բեզի տղեն քնից ելել ա, աղջկան դրգել ա գավով ջուր ընրելու: Աղջիկը գիտի, որ ֆիդայիները սարում են, երգով իմաց ա տալի, որ գան, իրան ազատեն):

Պարսիկ աղբյուր, պարսիկ, քեզնից ջուր տանեմ,
Պարսիկ, պարսիկ, քյուրդի աղին ջուր տանեմ:

Աղբյուր, գիտե՞ս քյուրդ մեզի ինչ կանե,
Կկոտրե, կչարչարե, կսպանե:

կրկ. Դե ջուտ պարսիկ, բեզի աղին ջուր տանեմ,
Պարսիկ, պարսիկ, Խան Մուրադին լուր տանեմ:

Կար ժամանակ, որ մենք էլ ապատ էինք,
Մեր սեփական թագավորներն ունեինք:

կրկ. Դե ջուտ պարսիկ, բեզի աղին ջուր տանեմ,
Պարսիկ, պարսիկ, Անդրանիկին լուր տանեմ:

(Սարից պատասխան ա գալի)

352. Կարկուտն էկալ Խանասորա դաշտումը,
Բեզի տղեն հայ աղջկան աանում է:
Մի վախենա, հանգիստ մացի, աղջիկ ջան,
Խանասորա դաշտի վրա մենք կուխում ենք,
հապար ջան:

353. ՋԱՂԱՑԻ ԵՐԳ

(Ութ ֆիդայի հարյուրապետ, եագարապետ՝
Գորգին, Ռուբենը, Առաքելը, Մուշեղը, Գևորգ Չա-
լուշը, Աոյուծ Ավագը, էլի երկուսը գալիս են
Ցրոնք գյուղ եանգստանալու: Հայերի մեջ մի
Վասակ կար, Աղջո անունով, իսարարը տվեց
Խայմախսամին: Խայմախսամը երաման տվեց
գյուղը շրջապատել, ֆիդայիները փախան,
մտան ջաղացը):

Վախթն են կանուխ եր՝ դեմ արշալույսին,
Մեր հոգնած քաջեր դեռ կհանգչեին,
Հանկարծ ներս մաավ կարիճ գյուղացին,
Ասաց՝ ո՛վ տղեք, մեզ պաշարեցին:

Տղեք վեր ելան, առին մուսենին,
Դեպի մեջ իրանց դիրքեր վազեցին,
Գոռաց մուսենին պարոն Իշխանին,
Կխրախուսեր մեր հայ քաջերին:

Նարեկա մատնիչ, թուրքի սիրական,
Ինչպես ջուտ մոռցար հեղափոխական,
կրկ. Աստված առներ քու սիրուն վավակներ,
Որ դու չմատնեիր մեր հայ քաջերին:

354. ԵՐԳ ՆԱՀԱՏԱԿԻ

կրկ. Ղերեզմանիս թող, արչանիս վրա,
Գրել հալթություն, թե գործող է սա:
Այն առեն թող կնքե իմ գերեզմանիս վրա
Ապատ դրոշակներով, հայի պինվորներով,
քահանաներով:

Հանգչին ոսկորներս մըջ իմ տապանին,
Յուցնիմ փրկություն մալ Հայաստանին:
Գալարին աղիքներ, թափինք արասաւորներ,
Տեսնիք պի ինչ ընկեր,
Նահատակ է պառկել ծոց Հայաստանին:

Անչավեր եմ ես, Մերոք փաշի պես,
Յուցնեմ գերեզման Արմենակի պես,
Թող աեսնին Հայաստան,
Թող կարդան հայ քաջեր,
Տեսնին պի իրենց ընկեր,
Նահատակ է պառկել ծոց Հայաստանին:

355. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Տաճկահայաստանը ուրքի է կանգնում,
Աոյուծաբար վրե՛ժ, վրե՛ժ է կանչում,
Արյունով սերկուս էր թուր դաշտերը,
Արյուն էր հոսում թուր գետերը:
Թուր, թուր, թուր գետերը,
Արյուն էր լցված թուր գետերը:
Ի պե՛ն հայեր, ի սո՛ւր և ի հրապա՛ն,
Տաճկահայաստանից կոչում է մի յայն:
Լեռից լեռ թնդում էր ահեղ հրաման,
Թո՛ւք հայեր, թո՛ւք դեահ Հայաստան:
Դեպի, դեպի, դեպի Հայաստան,
Թո՛ւք հայեր, թո՛ւք դեպի Հայաստան:

Արևելք, արևմուտք, հարավ և հյուսիս,
Դժոխքայ ու թնդայ քաղցր ավեսիս:
Հայկա քաջ զավակայ առյուծ կուրծքերից,
Ազատություն հնչեց ամեն կողմերից:
Ամեն, ամեն, ամեն կողմերից
Ազատություն հնչեց ամեն կողմերից:

356. ՄԵՐՈՔԻ ԵՐԳԸ

Գյալըգյուլան դուման ի,
Հալըմ յոխտուր յամանի,
Ասկյար գյալդի գյումանի,
Վեր կայ, դու տես, Մերոք քան:
(թարգմանությունը՝
Գյալիգյուլանում մշուշ է,
Վիճակս լավ չէ,
Ջինվոր եկավ-հույսը)

Էլ չես ասում, Մերոք քան,
Ջանիդ մատաղ, հերոս քան,
Վեր կայ, վերցրու հրապան,
Ինչ կտանեն գերության:

Աղջո՛, քո տուն քանդեցիր,
Ինչի Մերոքին մատնեցիր,
Հայեր գերի տվեցիր,
Վեր կայ, դու տես, հերոս քան:

Ախ բավ է, կանչեմ Մերոք քան,
Ջանիդ մատաղ, հերոս քան,
Վեր կայ, վերցրու հրապան,
Ինչ կտանեն գերության*:

357. ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇԻ ԵՐԳԸ

(Գևորգ Չավուշի գլխավորությամբ Յուլդուզ
քոչքում ուումը են գցում թուրքի պալատի վրա,
որի պատճառով հրաման է տրվում ձերբակալել
Գևորգ Չավուշին, բերել պալատ):

Յուլդուզ քոչքից հրաման
Տվեց դահիճ սուլթանը,

* Մերոք փաշը դիակի վրա երգում է Մոսիմ՝ Մերոք փաշի
մարտական ընկերն ու կինը (Ծ.Ա.):

Կրկ. Մայեք բարով, ընգերներ,
Մոտ է կյանքիս վախճանը:

358. ԵՐԳ-ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐԲ ՓԱՇԱՅԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇԻ ՄԻՋԵՎ

(Թուրքի փաշեն հարց է տալիս, Գևորգ
Չավուշը պատասխանում է)

Օլան գյավուր, տողրի սոյլա,
Սանի թուվանք, վար սր դի:
(Անհավատ, ճիշտն ասա
Դու հրապան ունե՞ս):
- Խեր, աֆանդըմ, իֆտի տա դըր,
(Այո, էֆենդիմ, այդպես է)
Կողքես կախված է:

Օլան գյավուր, տողրի սոյլա,
Սանի լեյվար վար մի դի:
(Անհավատ, ճիշտ ասա
Դու ատրճանակ ունե՞ս):
Խեր, աֆանդըմ, իֆտի աա դըր,
(Այո, էֆենդիմ, այդպես է,)
Ծոցս դրված է:

Օլան գյավուր, տողրի սոյլա,
Սան դա ֆիդսսիմը սան:
(Անհավատ, ճիշտ ասա
Դու ֆիդայի ե՞ս):

- Խեր, աֆանդըմ, իֆտի տա դըր,
(Այո, էֆենդիմ, այդպես է)
հավարի մենչ եմ:
Սուտ է ասում, սուտ է խոսում,
Հավարի մենչ եմ:

359. ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇԻ ՀԻՇՍԱԿԻՆ

Հավար իննը հարյուր յոթ թվականին,
Չքնաղ մայիսու քսան ու յոթին,
Տոն բավաշխատ մահվան Գևորգին,
Սասնու հարապատ մեծանուն քաջին:

Յուր գրկած հողը լինել ամենին,
Առաջ արշավեց Զոսա ռին բաշին,
Կանչեց, ֆիդայիք, մահ է չեր բաժին:

Դրեք հնգերներ, ծածկեցեք խոտով,
 Չկորգ Չավուշը մնայ կարոտով:
 Վերջին իմ բարևը տարեք հայերին,
 Ասացե՛ք Չկորգ Վոհվեց յուր ազգին,
 Ասացե՛ք Չավուշ Վոհվեց յուր ազգին:

360. ԵՍ ՀԱՆԵՑԻ ՍՈՒՐՍ ՊԱՏՅԱՆԻՑ

Ես հանեցի սուրս պատյանից, արտասունքով
 օծեցի,
 Տրտմավ անուշ սիրականս, երբ իմ ողբս
 կարդացիր:
 Նա երդվեցավ յուր սըրովը չխնայել
 թուրքերին,
 Այս պայմանով աշխույժ քաջին սուր, հրացան
 հանչնեցին:

Աստված սիրեք, հայ աղջիկներ,
 Եկեք, խորհենք միասին,
 Կրկ. Այսուհետև էլ չսիրենք
 Կովից թախչող վախկոտին:

Կգա գարուն, մենք կսպասենք
 Նոր քախա, պայքար թուրքի հետ,
 Մեր լեռներից պիտի հոսի
 Արյունն ինչպես հեղեղ ու գետ:

361. ԹԵՎԻ ՎԵՐԲԸ

Կրկ. Առաիկ իմ, արի, իմ սարի որդի
 Թշնամու գնդակ չի ծակեր ընչի:
 Մոմոռում էր իմ վերքեր անկողնու վրա,
 Հայ եղբայր գնդակով ես վերք ստացա,
 Հայ եղբայր գնդակով յարալու եղա:

Չայլի պես Վոհված թուրքի պետություն,
 Սարերի գլուխ թափվեց մեր արյուն,
 Մոմոռում էր իմ վերքեր իմ թևի վրա,
 Հայ եղբայր գնդակով յարալու եղա,
 Հայ եղբայր գնդակով ես վերք ստացա:

362. ՀԱՆԵՆՈՒԿՆԵՐ

ԵՐԿՆԱՅԻՆ, ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Գումշի կաշի,
 Ոչ կհալի, ոչ կմաշի:
 (ԵՐԿԻՐ)
2. Էն ի՞նչն ա, ինչ.
 Անգերան շինած ա,
 Անսին կաղնած ա:
 (ԵՐԿԻՐ)
3. Երկեն կարպետ՝ ծավիլ չի,
 Վրեն մանդր քարեր՝ համբարվիլ չի:
 (ԵՐԿԻՐ)
4. Էն ի՞նչն ա, ինչ.
 Ինքը մինն ա, աչքերը՝ հապար:
 (ԵՐԿԻՐ)
5. Էն ի՞նչն ա, ինչ.
 Որ ոնչ խուփ ունի, ոնչ էլ՝ սին:
 (ԾՈՂ ՈՒ ԵՐԿԻՐ)
6. Զիր ու ախաբեր մի դպում
 Զշեր-ցերեկ իրար եղնա վապում են,
 Ամա հասնում չեն:
 (ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ)
7. Մի ծով կա,
 Էրեսին քիր ու ախաբեր ման են
 գալի գյամով:
 (ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ)
8. Ախաբերը գնում է քվորը դոնաղ,
 Զիրը կորչում է:
 (ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ)
9. Մեր տան քրմակին մի մեծ կըրկենի:
 (ԱՐԵՎԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՇՈՂՔԸ)
10. Ոստե պուպուկ,
 Ոնդե պուպուկ,
 Էրթըկեն դուս:
 (ԱՐԵՎԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՇՈՂՔԸ)